ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1469 29.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի ՁՊՎ և արձանագրել էր թերություններ, խախտումներ և միաժամանակ խոչնդոտվել էր Դիտորդական խմբի աշխատանքները:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՄՈ № 3313
«06» 10 2014 թ.

Թերություն՝

1. Երկրորդ խցի ջրի ծորակը չէր գործում:
2. Վարչակազմի կողմից ցույց տրված բուժսենյակը չէր տարբերվում սովորական խցից: /փաստը հաստատող լուսանկարներ – 5,6/

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՄՈ № 7738
«06» 10 2014թ.

Խախտում՝

Ընդհանուր ՁՊՎ-ում առկա գրանցամատյանների ուսումնասիրության ընթացքում Դիտորդական խումբը արձանագրեց, որ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում թիվ 32 գրառումից հետո, 9-րդ էջում ընդհանրապես գրառում չկար և բաց էր թողնված և հաջորդիվ թիվ 33, թիվ 34 և այլ գրառումները կատարվել են բաց թողնված էջից հետո:

Միաժամանակ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա , որ եթե նշված փաստը կատարվել է սխալմամբ կամ անփույթ աշխատանքի արդյունքում, պետք է էջը անվավեր ճանաչվեր և հաստատվեր պատասխանատու ոստիկանի ստորագրությամբ, որը արված չէր: /փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3,4/

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Դիտորդական խմբի աշխատանքները խոչընդոտող փաստ

Այցելության ժամանակ Դիտորդական խումբը ՀՊՎ-ի վարչակազմից խնդրեց, որպեսզի տրամադրեն դատաքննության նպատակով ՀՊՎ ընդունված որևէ կալանավորի հիմքը /որոշում/՝ դատավորի կողմից տրամադրված: Վարչակազմի կողմից մեկնաբանություն հնչեց, որ հերթապահ մասի պետը տեղում չէ և գրագրության հետ կապված ոչ մի փաստաթուղթ չեն կարող տրամադրել: Բայց որոշ ժամանակ անց մեկնաբանեցին, որ համապատասխան բանալին բերում են և կտրամադրեն անհրաժեշտ փաստաթուղթը:

Դիտորդներին տրամադրվեց ընդհանուր ձերբակալվածներին և կալանավորված անձանց վերաբերող գրագրությունները մեկ փաթեթով, որտեղ առկա էր անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Դիտորդական խմբի անդամները կալանավորներից մեկի համապատասխան որոշումը ուսումնասիրելուց հետո ամբողջ փաթեթը հետ վերադարձրեց վարչակազմին:

Հետագա ուսումնասիրությունների ժամանակ Դիտորդական խումբը խնդրեց, որպեսզի նշված փաստաթղթերի պարունակությունից տրամադրեն x անձի քննչական գործողության նպատակով ՀՊՎ-ի տարածքից դուրս տեղափոխելու քննիչի կողմից ներկայացված համապատասխան հայտը: Բայց այս դեպքում վարչակազմի կողմից հնչեց մեկնաբանություն, *որ չեն կարող տրամադրել, որովհետև նշված փաստաթուղթը, որտեղ այն պահվում է, բանալին իրենց մոտ չէ:* Այն դեպքում, երբ դրանից մոտ 10 րոպե առաջ այդ բոլոր փաստաթղթերը իրենց մոտ էին գտնվում և Դիտորդական խումբը ուսումնասիրել էր:

Այստեղից եզրակացություն, որ ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի ՀՊՎ-ի վարչակազմը միտումնավոր չի տրամադրել փաստաթղթերը՝ խոչընդոտելով Դիտորդական խմբի բնականոն աշխատանքը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն կատարվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitor

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2881 <<10>> 11 2014թ.

Ձեր 29.09.2014թ. թիվ 2621/1469 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները, թերությունները և դիտորդների խմբի աշխատանքները ՁՊՎ վարչակազմի կողմից խոչընդոտելու հանգամանքը ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Սյունիքի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. Երկրորդ խցի ջրի ծորակը փոխարինվել է նորով:

2. ՁՊՎ-ի բուժսենյակի դռան վրա արտաքին կողմից փակցված է <<Բուժսենյակ>> գրառումը, ներսում առկա են մահճակալ բժշկական սավանով, պատին ամրացված դեղարկղը սահմանված դեղատեսակներով, սեղան և աթոռ, ինչը լիովին համապատասխանում է ընդունված չափանիշներին: Սակայն դիտորդների խմբի կողմից ներկայացված լուսանկարներում պատկերված չէ բուժսենյակի ամբողջական պատկերը, որտեղ արտացոլված չեն վերը նշված բժշկական պարագաները և իրերը:

<<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման >> գրանցամատյանի 8-րդ թերթն ավարտվել է թիվ 32 համարի տակ կատարված գրառմամբ: Թյուրիմացաբար 9-րդ թերթի 1-ին էջում գրառում չի կատարվել և 33-րդ համարը լրացվել է նույն թերթի 2-րդ էջում: Նշված բացթողման հետևանքով հերթական համարների խախտում չեն եղել, որևէ ձերբակալված կամ կալանավորված անձ հաշվառումից դուրս չի մնացել, ինչը հստակ երևում է նաև հաջորդականությամբ գրառված հերթական համարներից և ամսաթվերից:

Հարկ է նշել, որ նշված բացթողման հետևանքով ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքները չեն խախտվել: Այնուամենայնիվ, ներկայումս չլրացված էջը անվավեր է ճանաչվել:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ վարչակազմի կողմից դիտորդների խմբի աշխատանքներին խոչընդոտելուն, ապա հայտնվում է, որ դիտորդների խմբին տրամադրվել է ՁՊՎ գործունեությանը վերաբերվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև կալանավորված անձին ՁՊՎ ընդունելու վերաբերյալ դատարանի կողմից տրված որոշման պատճեն, որը դրված է եղել հերթապահ մասի պետի աշխատասենյակում: Հիշյալ փաստաթղթի տրամադրումը վարչակազմի կողմից բարի կամքի դրսևորման արդյունք է, քանի որ համաձայն ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանի առանց ՁՊՎ-ում պահվող անձի համաձայնության անձնական գործ դիտորդներին չի տրամադրվում, հետևաբար ձերբակալված Ա.Ասլանյանին քննչական գործողության նպատակով ՁՊՎ-ի տարածքից դուրս տեղափոխելու վերաբերյալ քննիչի կողմից տրված հայտը չտրամադրելը դիտել որպես խմբի գործունեությանը խոչընդոտելու փաստ՝ իրավաչափ չէ: Ազատ արձակվածների, այդ թվում և Ա.Ասլանյանի անձնական գործը գտնվել է բաժնի հերթապահ մասի պետի աշխատասենյակի չհրկիզվող պահարանում: Դիտորդների խմբի այցելության օրը հերթապահ մասի պետը գտնվել է գործուղման մեջ և վարչակազմը չհրկիզվող պահարանի բանալին չունենալու պատճառով նշված հայտը չի տրամադրել դիտորդների խմբին:

ՀՀ ոստիկանության շտաբ